

## ՄԱՐՄՆԻ ՄԱՍԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԵՐԵՆՈՒՄ

ԱՐԵՎԻԿ ՔԱՄԱԼՅԱՆ\*   
*Երևանի պետական համալսարան*

Հնագույն քաղաքակրթություններում չափման միավորների հիմքում ընկած են եղել նախ և առաջ մարդու մարմնի մասերը: Տարբեր երկրների, ժողովուրդների առևտրա-տնտեսական, մշակութային, քաղաքական տնական շփումները նպաստել են նաև փոխառություններին, ուստի զարմանալի չէ, որ տարբեր, հաճախ անգամ ոչ ցեղակից լեզուներում գոյություն ունեն նույն չափման միավորները: Մարմնի մասերին առնչվող այդ միավորների մի մասն այսօր դուրս է եկել գործածությունից (ինչպես, օրինակ, հայերենի կանգունը կամ ռուսերենի *локоть*-ը), սակայն մեծ մասը շարունակում է գործածվել առօրյա խոսքում, կենցաղում, հանդիպում է դարձվածքների, կայուն բառակապակցությունների կազմում:

Հոդվածում առաջին անգամ զուգադրական քննության են ենթարկվել մարմնի մասերին առնչվող չափման միավորները հայերենում, ռուսերենում և բուլղարերենում: Աշխատանքի նպատակն է վեր հանել երեք լեզուների ինչպես ընդհանրությունները, այնպես էլ տարբերությունները: Այդ տարբերությունները երբեմն խնդիր են դառնում մի լեզվից մյուսը թարգմանության ժամանակ, հատկապես երբ այս կամ այն չափման միավորը հանդիպում է դարձվածքի կազմում:

**Բանալի բառեր** - *ժողովրդական չափագիտություն, չափման միավորներ, ոտնաչափ, պտղունց, թիզ, սոմատիկ դարձվածքների թարգմանություն*

Չափման միավորների մասին առաջին տեղեկությունները մեզ են հասել մ.թ.ա. 3-4 հազարամյակից. գոյություն են ունեցել եգիպտական, հին հրեական, հին հունական, հին հռոմեական և այլ չափման համակարգեր: Չափագիտության պատմության նկատմամբ գիտական հետաքրքրությունը ձևավորվել է հիմնականում 19-20-րդ դդ.: Տարբեր լեզուներում չափման հնագույն միավորների մա-

\* **Արևիկ Քամալյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ

**Արևիկ Կամալյան** – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка ЕГУ

**Aravik Kamalyan** – Candidate of Philological Sciences, Associate Professor at YSU Chair of Armenian Language

Էլ. փոստ՝ [a.kamalyan@ysu.am](mailto:a.kamalyan@ysu.am). ORCID: <https://orcid.org/0009-0004-1721-3106>.



սին բավականին ուսումնասիրություններ, աշխատություններ, հանրագիտական բառարաններ են գրվել<sup>1</sup>: Բոլորովին վերջերս բավականին մեծ աշխատանք է կատարել հետազոտողների մի խումբ՝ ուսումնասիրելով մարմնի մասերով արտահայտված չափման միավորները 186 մշակույթներում և էթնիկ խմբերում<sup>2</sup>:

Հայերենի համար օգտվել ենք Հ. Մանանդյանի<sup>3</sup>, Ստ. Ագոնցի<sup>4</sup> աշխատություններից, ինչպես նաև ստուգաբանական, բացատրական, դարձվածաբանական բառարաններից<sup>5</sup>: Ռուսերենի համար օգտվել ենք Լ. Մոլչանովայի<sup>6</sup>, Ն. Շոսայինի<sup>7</sup> աշխատություններից, հանրագիտական, բացատրական, դարձվածաբանական, ստուգաբանական բառարաններից<sup>8</sup>: Բուլղարերենում չափման միավորների մասին տվյալները վերցրել ենք Խ. Վակարելսկու «Етнография на България» աշխատությունից<sup>9</sup>, Վ. Շառլանովայի «Народна метрология» մենագրությունից<sup>10</sup>, Դ. Կոենի հոդվածաշարից<sup>11</sup>, ստուգաբանական, բացատրական և դարձվածաբանական բառարաններից<sup>12</sup>:

<sup>1</sup> Չափման հնագույն միավորների մասին տեղեկությունների համար օգտվել ենք Jewish Encyclopedia, 1906, Weights and measures բաժնից; A Dictionary of Greek and Roman Antiquities. 1890, 3 ed. (<https://shorturl.at/eksJM>). The Brill Dictionary of Ancient Greek. 2015; A Greek–English Lexicon (LSJ) Oxford University Press. (<https://rb.gy/tr1371>); Dilke, Oswald Ashton Wentworth. Mathematics and measurement. University of California Press. էջ 23–28 (<https://rb.gy/ggmy0u>); Словарь библейских образов. [Справочник] Под общ. ред. Лиланда Райкена, Джеймса Уилхойта, Тремпера Лонгмана III; [пер.: Скороходов Б.А., Рыбакова О.А.]. - Санкт-Петербург : Библия для всех, 2005, 1423 ст.:

<sup>2</sup> Աշխատանքի արդյունքները տպագրվել են Science ամսագրում՝ Science, 1 June, 2023, Vol 380, Issue 6648, էջ 948–954. Body-based units of measure in cultural evolution | Science:

<sup>3</sup> Տե՛ս Հ. Մանանդյան, Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում, ՀՄԽՀ ԼՈՒՍԾՈՂՎՈՄՍՍ; Մանկավարժական ինստիտուտ: Հրատարակչություն Մելքոնյան ֆոնդի: Եր., 1980 (<https://rb.gy/3escl4>):

<sup>4</sup> Տե՛ս Ստ. Ագոնց, Հասարակախօսութիւն աշխարհագրութեան, 1817, Վենետիկ, Գրուխ Դ, Պէսպէս չափք այլևայլ ազգաց, 15, 12–31 («Հասարակախօսութիւն աշխարհագրութեան. Endangered Archives Programme»):

<sup>5</sup> Տե՛ս Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան (ՀԱԲ), ԵՊՀ հրատ., 1926–1935 (<https://rb.gy/ohpaoc>): Նոր բառգիրք հայկազեան լեզուի (ՆՀԲ), հայր Գաբրիէլ Աւետիքեան, հայր Խաչատուր Սիրմէլեան, հայր Մկրտիչ Աւգերեան, հ. 1, 2, Վենետիկ, 1836–1837 (<https://rb.gy/sfts6e>): Ստ. Սալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, Եր., 1944–1945 լն:

<sup>6</sup> Տե՛ս Молчанова Л.А. Народная метрология (к истории народных мер длины). Минск, 1973, 84 էջ:

<sup>7</sup> Տե՛ս Шостьин Н.А. Очерки истории русской метрологии. XI - начало XX века. М., 1975, 272 էջ:

<sup>8</sup> Տե՛ս Библиейская энциклопедия архимандрита Никифора (БЭАН). Вып. 1–4, М., 1891—1892 (<https://rb.gy/39nxf7>); Еврейская энциклопедия Брокгауза и Ефрона (ЕЭБЕ). СПб., 1908–1913 (<https://rb.gy/339rb6>):

<sup>9</sup> Տե՛ս Вакарелски Х. Етнография на България. София, 1977:

<sup>10</sup> Տե՛ս Шарланова В. Народна метрология. София, 1999, 164 էջ:

<sup>11</sup> Տե՛ս Коен Д. За предмета на историческата метрология и някои по-разпространени стари мерки за дължина и тегло в България и българските земи. — Архивен преглед, 1986, № 1, 42–59; За предмета на историческата метрология и някои по-разпространени стари мерки за дължина и тегло в България и българските земи. Продължение от свезка 1. — Архивен преглед, 1986, № 2, 73–85; За предмета на историческата метрология и някои по-разпространени стари мерки за дължина и тегло в България и българските земи. Продължение от свезка 2. — Архивен преглед, 1986, № 3, 54–69. <http://surl.li/pynlk>

<sup>12</sup> Տե՛ս Речник на българския език (гълковен, правописен, словоформен), Речник на българския език (онлайн). <https://ibl.bas.bg/rbe/>; Речник на съвременния български книжовен език (онлайн). <https://>

Չափման հնագույն միավորների մասին բավականին հետաքրքիր տեղեկություններ կարելի է ստանալ նաև Աստվածաշնչի՝ տարբեր լեզուներով թարգմանությունների զուգադրական քննությունից<sup>13</sup>: Աստվածաշնչի թարգմանությունը հսկայական ազդեցություն է թողել բոլոր քրիստոնյա ժողովուրդների լեզվի և առհասարակ մշակույթի վրա: Բազմաթիվ փոխառություններից բացի շատ են նաև բառացի պատճենումները, իմաստափոխության դեպքերը (երբ բառը նոր իմաստ է ստանում թարգմանության լեզվի ազդեցությամբ):

Մարմնի մասերով չափման միավորների մեջ կան ինչպես քիչ թե շատ հստակ չափ ցույց տվողներ (*ոտնաչափ, թիզ*), այնպես էլ խիստ մոտավոր միավորներ (*աչքաչափ*): Չասկանալի է, որ այդ չափման միավորները այսօրվա գիտության տեսանկյունից խիստ ճշգրիտ չէին. օրինակ՝ տարբեր երկրներում և տարբեր դարաշրջաններում արմունկ/արմնկաչափը հավասար է եղել 445-528 մմ<sup>14</sup>: Նշենք, որ հողվածում ընդգրկել ենք նաև այնպիսի միավորներ, որոնք պայմանականորեն կարելի է համարել չափման միավոր. դրանք սովորաբար զուտ կենցաղում մինչ օրս էլ կիրառվող միավորներ են, բնորոշ են այսպես կոչված ժողովրդական չափագիտությանը (օր.՝ *փոր (մի փոր հաց)*):

Որոշ չափման միավորներ քննվող լեզուներում ունեն նույն բառով համարժեքներ (օր.՝ *պտղունց - щепотка - щипка*), որոշ դեպքերում նույն չափման միավորը տարբեր լեզուներում արտահայտված է մարմնի տարբեր մասերով (*պորտ-колени-коляно*), կան նաև չափման միավորներ, որոնց բացարձակ համարժեքը բացակայում է լեզուներից մեկում կամ երկուսում:

Նախ դիտարկենք չափման այն միավորները, որոնք ունեն նույն բառով համարժեք գոնե երկու լեզվում:

Դեռ հնագույն ժամանակներից ամենատարածված չափման միավորներից է **արմունկը** (լատ. *cubitum*, հուն. *πῦγος (պեխտիս)*): Տարբեր դարաշրջաններում ու տարբեր մշակույթներում այն տատանվել է 450-528 մմ միջև<sup>15</sup>:

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
<i>արմունկ (գրբ.՝ արմուկն), արմնկաչափ կամ արմկաչափ</i>	ЛОКОТЬ	ЛАКЪТ

ՆՀԲ-ում արմնկաչափը մի արմունկի չափն է, «որ է կանգուն փոքր» (հտ. 1, ցուցակ 1, էջ 370): Դատելով բառարաններից՝ *արմնկաչափ/արմկաչափ* բառը («լայնություն պարսպին գուրիդում է, որ է արմնկաչափ») հայերենում սկսել է կիրառվել

ibl.bas.bg/rbe/; Български етимологичен речник. София, 2007-2010, тт. 1-8 (<https://ibl.bas.bg/ber/>); Български фрази и изрази:

<sup>13</sup> Համեմատել ենք Աստվածաշնչի հայերեն (Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց, համեմատութեամբ երբայական եւ յունական բնագրաց (Վիեննա, Սմերիկեան Ընկերութիւն Գրոց Սրբոց, 1929) Classical Armenian Bible [1895 Constantinople] - English Concordance [KJV]), ռուսերեն (Библия. Синодальный перевод на русском языке.) և բուլղարերեն (БИБЛИЯ) թարգմանությունները:

<sup>14</sup> Տե՛ս ԵՅԵ/Меры и вес:

<sup>15</sup> Տե՛ս A Dictionary of Greek and Roman Antiquities (1890) (<https://rb.gy/1v1fsg>); ԵՅԵ/Меры и вес:

միջին հայերենի շրջանից<sup>16</sup>, իսկ մինչ այդ cubitum-ը թարգմանել են *կանգուն*: Ըստ ՀԱԲ-ի՝ հին կանգունը արմունկից մինչև մատների ծայրը երկարությունն էր, իսկ արդի կանգունը դրա կրկնակին է՝ արշինը. Աճառյանը նշում է նաև, որ բուն հին հայկական կանգունը պիտի որ մարդու հասակի չափ լիներ (ՀԱԲ, հտ. 2, էջ 511):

*Локоть*-ը Ռուսաստանում երկարության չափման միավոր է, հիշատակվում է 11-րդ դարից սկսած, հավասար էր 455-445 մմ, 16-րդ դարից *ЛОКОТЬ*-ը փոխարինվել է *արշինով* (թուրք. փխտ., մատների ծայրից մինչև ուսազուլիսը  $\approx 0,71$  մ)<sup>17</sup>: Բուլղարերենում ևս արշինը եկել է փոխարինելու *лакът*-ին:

Բերենք օրինակ Աստվածաշնչի հայերեն, ռուսերեն և բուլղարերեն թարգմանություններից<sup>18</sup>:

Գիրք Օննորոց, 6:15: Եւ այսպէս արասցես զտապանն. յերեք հարեր *կանգնոյ* զերկայնութիւն տապանին, եւ ի յիսուն *կանգնոյ* զլայնութիւնն, եւ յերեսուն *կանգնոյ* զբարձրութիւնն:

Ռուս. 6.15: И сделай его так: длина ковчега триста *локтей*; ширина его пятьдесят *локтей*, а высота его тридцать *локтей*.

Բուլղ. 6.15: И го направи тъй: дължината на ковчега - триста *лакти*, ширината му - петдесет *лакти*, а височината му - трийсет *лакти*.

**Մատը** (լատ. *digitus*, հուն. *δάκτυλος* (դակտիլոս) ևս հնագույն միավորներից է, ըստ տարբեր աղբյուրների՝  $\approx 1,85-2,5$  սմ (ցուցամատի կամ բթամատի լայնությունն է).

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
մատ	палец/перст	пръст
<i>մատնաչափ</i>	<i>с палец/с пальчик</i>	

Հանդիպում է նաև Աստվածաշնչում.

Երեմիա, 52:21: (...) եւ մանեակ յերկոտասան կանգնոյ շուրջ գնովաւ, եւ թանձրութիւն նորա շուրջ առ չորս *մատունս*:

Ռուս. (...) и шнурок в двенадцать локтей обнимал его, а толщина стенок его, внутри пустого, в четыре *перста*.

Բուլղ. (...) и връв от дванайсет лакти го обгръщаше, вътре беше кух, а стените му бяха дебели четири *пръста*.

Մատը՝ որպէս չափման միավոր, երկակի կիրառություն ունի՝ մատի երկարությունը և մատի լայնությունը: Քննվող լեզուներում կան կայուն բառակապակցություններ և դարձվածքներ, որոնց մի մասն ունի բացարձակ, մի մասը՝ հարաբերական համարժեք մյուս լեզվում/լեզուներում.

<sup>16</sup> Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի; Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Եր., 2009:

<sup>17</sup> Տե՛ս *Локоть* — Большая советская энциклопедия:

<sup>18</sup> Հաշվի առնենք այն հանգամանքը, որ Աստվածաշունչը հայերեն և ռուսերեն ու բուլղարերեն թարգմանվել է տարբեր դարերում՝ տարբեր միջնորդ լեզուներից, ինչի հետևանքով տեքստերում կան որոշակի տարբերություններ:

երկու մատ լայնությամբ/հաստությամբ - в 2 пальца шириной/толщиной - с широчина два пръста

Մի մատ խորքից կայուն բառակապակցությունը (որտեղ մատը մատի լայնությունն է) ռուսերենում թարգմանվում է հարաբերական համարժեքով՝ с красной строки:

Հայերենում կա մի մատ երեխա դարձվածք (որտեղ մատը մատի երկարությունն է)՝ չափազանց փոքր (տարիքի մասին) -1. դրական կոննոտացիայով, 2. բացասական կոննոտացիայով.

դր. - Շունը մի մատ երեխայի առաջ էլ պոչն իրեն է քաշում ու լուռ հեռանում իր սարեր (Հր. Մաթևոսյան, Տաշքենդ),

բցսկ. - Մի մատ երեխա էս, ի նչ էս քիթդ մեծերի գործերի մեջ խոթում:

Կախված համատեքստից այս դարձվածքը կարող է թարգմանվել բառով, բառակապակցությամբ, հարաբերական համարժեք դարձվածքով. օր. ռուս. - ребенок, дитя ևն (դր. կոնն.), мал еще; молокосос; сопляк, щенок, нос не дорос ևն (բցսկ. կոնն.), բուլղ. дете, маляк (դր.), пале (բցսկ.):

Հայտնի հեքիաթի վերնագիրը հայերեն թարգմանված է «Մատնաչափիկը», ռուսերեն “Мальчик с пальчик”, բուլղարերեն “Малечко-палечко”.

Բուլղարերեն ունի с два пръста чело դարձվածք (բառացի՝ 2 մատ ճակատ (ունեցող), որ նշանակում է ոչ այնքան խելացի մարդ: Հայերենում և ռուսերենում դարձվածքը կարող է թարգմանվել բառով կամ հարաբերական համարժեք դարձվածքով. օր. հայ. - անխելք; դատարկազուխ; մի գրամ խելք չունի; խելքի ծով (հեգն., ծաղր.); ռուս. - тупой, тупица, кретин, дуб дубом, ума палата ևն:

Մատը հայերենում ունի նաև «նյութի քանակություն, որ կարելի է վերցնել մի մատ զարկելով» իմաստ՝ մի մատ մեղր, որ բացակայում է մյուս 2 լեզուներում:

Ունենք մի մատ մեղր դառնալ/դարձնել դարձվածք՝ «խայտառակվել, բամբասանքի առարկա դառնալ/խայտառակել, բամբասանքի առարկա դարձնել»: Դարձվածքը կարող է թարգմանվել միայն հարաբերական համարժեքներով կամ նկարագրական եղանակով. ռուս. - опозорить/опозориться (на весь мир), сделать/стать предметом сплетен ևն, բուլղ. - позоря, охульвам, подлагам на хула ևն:

Ափը (լատ. palmus, հուն. παλαιστή (պալաիստե)՝ հնագույն չափման միավորներից ևս մեկը, դաստակից մատների հիմքն ընկած հատվածն է (palmus minor (փոքր ափ) =4 մատ), ≈8-10 սմ: Հայերենում ունի հոմանիշ՝ ուղուկ (հիմքում ռդն բառն է (ՀԱԲ, հտ. 3, 554)=4 մատնաչափ, ափ: Ափը նաև բուռն է (ՆՀԲ, հտ. 1, ցուցակ 1, էջ 397). 1. ձեռքի ափի մեջ տեղավորվող քանակությունն է, 2. փխբ. նշանակում է շատ քիչ:

Ռուսերենում և բուլղարերենում ևս ափն ու բուռը հոմանիշ են և գործածվում են palmus-ի թարգմանության համար.

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
ափ, ափաչափ	ладонь	длан
ուղուկ, բուռ	горсть, пригоршня	шепа

Եսայի, 40:12: Ո՞չափեաց *ափով* իւրով զջուրս (...):

Ռուս. - Кто исчерпал воды *горстью* своею (...).

Բուլղ. - Кой е изчерпал водите *с шепата* си (...).

Ելից, 25:25: Եւ արագեւ նմա պսակ *ուղկեան* շուրջանակի:

Ռուս. - И сделай вокруг него стенки *в ладонь*.

Բուլղ. - Наоколо ѱ направи страници колкото *една длан*.

Եզեկիել, 13:19 (...) եւ բամբասեին զիս՝ առաջի ժողովրդեան իմոյ վասն *ափով* *ափով* զարւոյ:

Ռուս. - И бесславите Меня пред народом Моим *за горсти* ячменя.

Բուլղ. - И Ме безчестите пред Моя народ *за шеп* ечемик.

Թագավորություններ, Գ, 17:12: (...) է որչափ *բռնար* *ափ* ալեր ի սափորի, եւ սակաւ մի եւղ ի կամփսակի:

Ռուս. -(...) у меня ничего нет печеного, а только есть *горсть* муки в кадке и немного масла в кувшине.

Բուլղ. -(...) нямам нищо печено, а имам само *шепа* брашно в делвата и малко дървено масло в гърнето.

Երեք լեզվում էլ կան բացարձակ համարժեք դարձվածքներ.

*ափ բուռ հող -горсть земли -шепа земя,*

*ափ բուռ մարդ/ժողովուրդ -горсть людей -(една) шеп* хора:

Իսկ «*ափ/կես բուռ դառնալ*» (=սաստիկ փոքրանալ, կծկվել), «*ափ բուռ (պանալ)*» (=փոքրամարմին) դարձվածքների համար բացարձակ համարժեք մյուս երկու լեզուները չունեն:

Գոյություն է ունեցել նաև *palmus major* (մեծ ափ)՝ բթամատից ճկույթի ծայրը, որ **թիզ** է (հուն.՝ *σπιθαμή* (սպիտամե)), ≈22-23 սմ: Ըստ Մանանդյանի՝ 1 թիզը =0,266 կ 1/3: Թիզ է կոչվել նաև բթամատից ցուցամատի ծայրն ընկած բացվածքը (հուն.՝ *λίχας*=10 մատի), որ հայերենում ունի հոմանիշ՝ **քիլ**<sup>19</sup> (մեծ թզից պակաս է ցուցամատի մի հողի չափով, փոքր թիզ)<sup>20</sup>:

Ռուսերենում *пядь/пядень*-ը բթամատից ցուցամատի ծայրը ընկած բացվածք է (*малая пядь*=18-19 սմ), նաև բթամատի ծայրից ճկույթի ծայրն ընկած բացվածքը (*большая пядь*=22-23 սմ): Ըստ ЭСБЕ-ի՝ Աստվածաշնչի թարգմանության մեջ *пядь*-ով թարգմանվել է հունարենի *παλαίση*՝ ափը<sup>21</sup>:

Բուլղարերենում *педя*-ն բթամատից ճկույթն ընկած բացվածքն է, իսկ *чепёрек* (բրբռ.)՝ բթամատի և ցուցամատի միջև ընկած տարածությունը:

<sup>19</sup> Նշենք, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ թիզը հանդիպում է 11 անգամ, քիլը՝ 1, ուղուկը՝ 4 անգամ (տվյալներն ըստ <https://arak29.org/classical-armenian-bible-with-parallel-king-james-version/> [https://www.arak29.org/bible/book/index\\_1\\_az.htm](https://www.arak29.org/bible/book/index_1_az.htm)):

<sup>20</sup> Տե՛ս ՀԱԲ, ՆՀԲ:

<sup>21</sup> «*Пядь — старинная мера протяжения. В славянском переводе Священного Писания словом «П.» передано греческое παλαίση = пальма, длань*».

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
թիզ քիլ	пядь, пядень (հնգ.)	педа чеперек

Աստվածաշնչի թարգմանությունից բերված օրինակներում երևում է, որ նույն բառի դիմաց երբեմն տարբեր հոմանիշներ են.

Եսայի, 40:12: Ո՞չափեաց *ափով* իւրով զջուրս, եւ զերկինս *թզաւ*, եւ զերկիր ամենայն՝ *քիւլ*:

Ռուս. - Кто исчерпал воды *горстью* своею и *пядью* измерил небеса, и вместил в меру прах земли.

Բուլղ. - Кой е изчерпал водите с *шепата* си и с *педа* е измерил небесата, и е вместил в мяра праха земен.

Ելից, 28:16: Եւ արասցես զնա չորեքանկիւնի՝ *թզաւ* յերկայնութիւն եւ *թզաւ* ի լայնութիւն:

Ռուս. - Он должен быть четырёхугольный, двойной, в *пядень* длиною и в *пядень* шириною.

Բուլղ. - Той трябва да бъде четириъгълен, двоен, *педа* дълъг и *педа* широк.

Եզեկիել, 43:13: Եւ այս չափ սեղանոյն. կանգուն մի ի կանգնոց, եւ *կանգուն մի եւ ուղուկ* զոգած խորութեան նորա. եւ *կանգուն մի* լայնութիւն, եւ պսակ շուրջ զծնօտիք նորա շուրջանակի *թզաւ մի*:

Ռուս. 43.13. Потом намерил он в воротах от крыши одной комнаты до крыши другой двадцать пять *локтей* ширины; дверь была против двери; 43.14: А в столбах он насчитал шестьдесят *локтей*, в каждом столбе около двора и у ворот.

Բուլղ. 43.13: И это размерите на жертвенника в *лакты*, като се смята за *лакът* *лакът* и *длан*: основата лакът, ширината пак *лакът*, и поясът по всичките му краища *една педа*.

Հայերենում ունենք **թիզուկէս** -1. չափման միավոր=1,5 թիզ կ 2. փխր., հեզն., արհմ. *շատ կարճահասակ*: Այս բառով ունենք «բոլոր *թիզուկէս*, լեզուն *զազուկէս*», «*թիզուկէս*, զետնի *բզեզ*» արտահայտությունները:

Բուլղարերենում կարճահասակ մարդու մասին ասում են *две педи человек* (բառացի՝ երկու թիզ մարդ): Իսկ ռուսերենում «շատ կարճահասակ» (հեզն., ծաղր.) իմաստի համար կան *ростом не вышел, метр с кепкой, от горшка два вершка* կն հարաբերական համարժեք դարձվածքներ:

Ռուսերենն ունի *7 пядей во лбу* (բառացի՝ *7 թիզ ճակատ (ունեցող)*), որ նշանակում է չափազանց խելացի. դարձվածքը կարող է թարգմանվել բառով կամ հարաբերական համարժեք դարձվածքով՝ հայ. -*խելքի ծով, խելքի կտոր, խելքը (ամեն ինչից) կտրել, բուլղ. - умна глава, сече му умът/глава* կն:

Երեք լեզվում էլ կա լիակատար համարժեք կայուն բառակապակցություն՝ *ոչ մի թիզ հող -ни пяди земли -ни педа земля*: Ամենայն հավանականությամբ՝ սրանք ծագել են նույն աղբյուրից:

**Ոսրբ/ունաչափը** (լատ. *pes*, հուն. *πούς*) կս գործածվել է հնագույն

ժամանակներից, իսկ որոշ երկրներում մինչ այժմ էլ կիրառվում է (օր.՝ անգլ. ֆուտը (*foot*=30,48 սմ): Տարբեր ժամանակներում և մշակույթներում տարբեր է եղել  $\approx 29,6-32,4$  սմ: Հունական ոտքը=30,8 սմ: ՆՀԲ-ում ոտնաչափը 4 ուղղուն է կամ 16 մատ: Ըստ Մանանդյանի՝ Աշխարհացույցից համառոտում=0,268464 մ, ընդարձակում՝ 0,266 1/3: Հայերենում ոտքը ստացել է նաև **քայլ, քայլափոխ** իմաստը:

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
ոտք/ոտնաչափ	стопа, фут (փխռ. անգլ.)	стъпка

Երկրորդ օրենք, 2:5: ... մի՛ գրգռիցիք ընդ նոսա ի պատերազմ, զի ոչ տաց ձեզ յերկրէ նոցա եւ ոչ *քայլ մի ոտին*...

2:4, 2:5. ...но остерегайтесь начинать с ними войну, ибо Я не дам вам земли их ни на *стопу ноги*...

2:4, 2:5. ...но пазете се, да не почвате с тях война, понеже аз няма да ви дам от земята им ни *една стъпка*.

Գործք, 7:5: Եւ ոչ ետ նմա ժառանգութիւն ի սմա եւ ոչ *քայլ մի ոտին*:

И не дал ему на ней наследства ни на *стопу ноги*.

И не му даде в нея наследство ни *една стъпка*.

Հայերենում ունենք հետևյալ դարձվածքները՝ *կես/մի/երկու ոտ(ք) ճանապարհ* (շատ մոտիկ), *մի ոտ առաջ տեղ հասնել* (մեկից առաջ անցնել շատ կարճ ժամանակով), *մի ոտի տեղ* (1. մի ոտքի ներքանի չափով, 2. շատ քիչ, 3. շատ մոտիկ), որոնք ունեն բացարձակ կամ հարաբերական համարժեք ռուսերենում և բուլղարերենում (տե՛ս «քայլ» բառի տակ):

**Քայլը** երկակի նշանակությամբ է գործածվել՝ քայլափոխի երկարությունը՝  $\approx 70-75$  սմ (լատ. *gradus*, հուն. *ἀπλοῦν βήμα* (հապլում բիմա) և կրկնակի քայլը  $\approx 1,48-1,54$ մ (լատ. *passus*, հուն. *βήμα<sup>22</sup>* (*բեմա/բիմա*)):

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
քայլ	шаг	разкрач, крачка

ՆԱԲ-ում քայլը= 6 ոտք կամ 36 մատ: Ըստ Մանանդյանի՝ համառոտ Աշխարհացույցում =1,610784 մ, ընդարձակում՝ = 1,598 մ:

Աստվածաշնչում հանդիպում է հետևյալ նախադասությունը.

Թագավորություններ, Բ, 6:13: Եւ էին ընդ նմա որ բառնային զտապանակն *ելթն դաս պարուց*: Սակայն ծանոթագրության մեջ ասվում է, որ եբրայերեն բնագրում «քայլ» բառն է՝ «Եբր. եղև իբրև գնացին որ բառնային զտապանակն Տեառն *քայլս վեց*»:

Ռուս. -И когда несшие ковчег Господень проходили по *шести шагов*...

Բուլղ. -И когато тия, които носеха Господния ковчег, преминаха *шест крачки*.

Երեք լեզվում էլ կան *ոտք* և/կամ *քայլ* բառով բացարձակ կամ հարաբերական համարժեք դարձվածքներ.

*Մի/երկու ոտ(ք) կամ քայլ -в двух шагах -на една крачка/на две крачки/на два разкрача*:

<sup>22</sup> Ի դեպ, ըստ Աճառյանի՝ այս բառն է ընկած հայերեն *բեմ* բառի հիմքում (տե՛ս <https://shorturl.at/ICDV7>):



Երեք լեզուներում էլ **գլուխը** ևս հանդես է գալիս իբրև չափման միավոր. 1. քանակ, հատ (սովորաբար կենդանիների), նաև կլորավուն, գնդաձև ուտելիքի մասին, 2. բարձրության չափման միավոր.

*10 գլուխ անասուն - 10 голов скотины- 10 главы добытьк,*

*1 գլուխ սոխ - 1 головка лука - глава лук,*

*մի գլուխ բարձր/ցածր -на голову выше/ниже -висок на ръст/бой,*

*գլխի չափ -размером с голову:*

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
գլուխ	голова/головка	глава

Բացարձակ համարժեք ունի նաև «**եղունգ**» չափման միավորը: Ըստ Մանանդյանի 1 եղունգը=0,016 մ: Երեք լեզվում էլ «եղունգի չափ» նշանակում է չափազանց քիչ, շատ փոքր:

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
եղունգ <i>եղունգի չափ (խելք ունենալ)</i>	НОГОТЬ/НОГОТОК <i>(мужичок) с НОГОТОК</i>	НОКЪТ <i>с размер на НОКЪТ</i>

**Պտղունցը** երկու կամ երեք մասների միացումով վերցված քանակությունն է:

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
պտղունց <i>մի պտղունց աղ</i>	щепотка <i>щепотка соли</i>	щипка <i>щипка сол</i>

**Աչքաչափը** երեք լեզուներում էլ ինչպես երկարության, այնպես էլ կշռի պայմանական միավոր է, հանդիպում է խոսակցական լեզվում, բարբառներում և մինչև օրս էլ կիրառվում է կենցաղում:

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
աչքաչափ/աչքաչափով <i>աչքաչափով աղ անել</i>	глазомер/на глаз <i>посолить на глаз</i>	окомер/на око <i>добавям сол на око</i>

Բացարձակ համարժեք ունեն նաև հետևյալ չափման միավորները.

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
մարդաբոյ/մարդաչափ <i>մարդաբոյ ծառ</i>	с человеческий рост <i>дерево с человеческий рост</i>	човешки ръст/бой <sup>23</sup> <i>дърво с човешки ръст/бой</i>
կում <i>մի կում ջուր</i>	ГЛОТОК <i>ГЛОТОК ВОДЫ</i>	ГЛЪТКА <i>ГЛЪТКА ВОДА</i>
մազ <i>մազաչափ, մի մազ</i>	волосок/волосинка <i>с/на волосок</i>	КОСЪМ <i>на (един) КОСЪМ</i>
բռունցք <i>բռնցքաչափ, բռունցքի չափ</i>	кулак <i>размером с/в кулак</i>	пестник, юмрук (թուրք. փխռ.) <i>с размер на юмрук</i>
բութ, բթամատ <i>բութ մատի չափ, բթաչափ</i>	большой палец <i>(размером) с большой палец</i>	Палец

<sup>23</sup> Բուլղ. бой (խսկց.) բառը, ինչպես և հայերենի բոլոր (հասակ) փոխառություն է թուրքերենից:

		с размер на палеца, клекавец <sup>24</sup>
ճկույթ	мизинец	малкия пръст/ кутре
ճկույթի չափ	(размером) с мизинец	с размер на малкия пръст/ кутре

Մինչև կապի հետ (ռուս.-ում՝ *до, по* նախդիրների, բուլղ.՝ *до* նախդիրի) չափ են ցույց տալիս հետևյալ մարմնի մասերը, որոնց մեծագույն մասը ունի բացարձակ համարժեք երեք լեզվում էլ:

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
մինչև կոկորդը	по горло	до гуша
մինչև վիզը	по шею	до шия
մինչև ծունկը/ծնկները	по колено/до колен	до коляното
մինչև ականջների ծայրը	по уши	до ушите
մինչև կոճր/կոճերը	до щиколоток	до глезените
մինչև մազերի ծայրը	до корней волос	до корена на космите
մինչև գոտկատեղ	до пояса/по пояс	до пояса
մինչև արմունկները	по локоть	до лакътя
մինչև քիթը	-	-

Նկատենք, որ որոշ չափման միավորներ երկակի իմաստ ունեն. կարող են նշանակել ինչպես մարդու մարմնի վերնից, այնպես էլ ներքնից սկսած մինչև այսինչ մասը (օր.՝ *զգեստը հասնում է մինչև ծունկը* և *մինչև ծունկը ջրի մեջ*):

Վերը նշված մարմնի մասերով կազմված դարձվածքները սովորաբար ունեն բացարձակ կամ հարաբերական համարժեք քննվող լեզուներում.

*մինչև կոկորդը կուշտ/զգված/խրված գործերի մեջ* - *сыт по горло/дел по горло* - *дойде ми до гуша*

*մինչև ականջների ծայրը սիրահարված* - *по уши влюблен* - *влюбен до уши*

*մինչև արմունկները արյան մեջ* - *по локоть в крови* - *кръв по ръцете си*:

Այժմ քննենք այն դեպքերը, երբ նույն չափման միավորը արտահայտված է տարբեր մարմնի մասերով, կամ լեզուներից մեկում դրանք չունեն մարմնի մասով արտահայտված տարբերակ:

Հայերենում ազգակցական կապը հաշվում են **պոքրտով**, իսկ ռուսերենում և բուլղարերենում՝ **ծնկներով**:

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
պոքրտ	колено	коляно

*7-րդ պոքրտ* - *7-е колено* - *7 коляно*

Հայերենում **պճեղը** սկզբնական նշանակությամբ ոտքի կոճն է, հետագայում զանազան իմաստներ է ստացել՝ 1. ոտքի մատ, 2. կճղակ, 3. սխտորի գլխի յուրաքանչյուր մասնիկը: Ռուսերենում «սխտորի մաս» իմաստին համարժեք է *зубчик*-ը (зуб -ատամ բառից):

<sup>24</sup> *Клекавец*-ը նաև բթամատից ցուցամատի ծայրն ընկած բացվածքն է (տե՛ս Речник на българския език. <https://ibl.bas.bg/rbe/>):

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
պղեճ	зубчик	-

Բուլղարերեն համարժեքը՝ *скилидка*, փոխառություն է հունարենից՝ *σκελίδα*, որն էլ իր հերթին ծագում է *կողոսկր* բառից<sup>25</sup>: Ըստ այլ վարկածի՝ բառի ծագումը կապված է *ազոր* բառի հետ<sup>26</sup>: Ամեն դեպքում, բուլղարերեն բառը ևս մարմնի մասի է առնչվում, թեև ժամանակակից լեզվում ծագումը չի գիտակցվում:

Բանավոր խոսքում, խոսակցական կան լեզվում իբրև չափման միավոր է հանդես գալիս նաև **բերանը**.

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
բերան	рот	уста

Հայերենում կա *մի բերան/մի բերանի* (=մի կծելու չափով, շատ քիչ) - *մի բերան քան ուտել, մի բերանի հաց*:

Ռուսերենում այս իմաստով գործածվում է *один кус* (*кусать* - կծել բայից) հարաբերական համարժեքը:

Ունենք նաև *մի/կես բերան (ասել)* – «*ակնարկել, հպանցիկ ասել*» դարձվածք, որ չունի բացարձակ համարժեք մյուս երկու լեզուներում:

*Կես բերան ասել*-ը հայերենում ունի նաև «*չուզելով, չկամությամբ ասել*» նշանակություն, որի համար բուլղարերենն ունի բառացիորեն նույն դարձվածքը՝ *с половин уста* («*Борисов се извини с половин уста*» - «Բորիսովը կես բերան ներողություն է խնդրել»):

Բերանը հայերենում և ռուսերենում ունի նաև «*շունչ, անձ, ուտող միավոր*» իմաստը.

*5 սոված բերան - 5 голодных ртов*:

Իսկ բուլղարենում այս իմաստն արտահայտվում է *гърло* (կոկորդ) բառի միջոցով.

*5 гладни гърла*:

Ի դեպ, հայերենի բարբառներում, օր.՝ Ղարաբաղի բարբառում, նույնպես «շունչ, անձ» իմաստը արտահայտվում է *բողազ* (փխտթ. թուրք.-ից, կոկորդ) բառով՝ *5 բողազ=5 շունչ, ուտող*<sup>27</sup>:

Բավականին հետաքրքիր է **գիրկ** (հուն. *οργιά* կամ *οργια* (*օրգիա*)) չափման միավորը: Հնագույն գիրկը՝ գրկաչափը, լայն տարածած ձեռքերի մատների մի ծայրից մյուսն ընկած երկարությունն էր: Տարբեր աղբյուրների համաձայն՝ գիրկը ≈ 1,5-2 մ: Ըստ ՆՀԲ-ի՝ նաև դրա կեսն է՝ արշինը: Ըստ Մանանդյանի՝ գիրկ = 1,598 մետր: Ստ. Ազոնցի աշխատության մեջ գիրկ = 6 ոտնաչափ, իսկ մեծ

<sup>25</sup> Տե՛ս A Greek–English Lexicon (LSJ) Oxford University Press (<https://rb.gy/1st7us>) :

<sup>26</sup> Տե՛ս Български етимологичен речник. Том VI. София, 2002, էջ 747 («*Скилида* (*скилидка*) - от „скелида“ с редукция на „и“, което пък е заемка от новогръцкото *skilída*, идващо от старогръцкото *σκελίς*, -*ίδος* „бедро, бутче“):

<sup>27</sup> Տե՛ս Ս. Մարգարյան, Ղարաբաղի բարբառի բառարան, Եր., 2013:

գիրկ=10 ոտնաչափ<sup>28</sup>: Հունական օրգիան եղել է ≈1,85 սմ:

Ռուսերենն ու բուլղարերենը այս հին գիրկ/գրկաչափի համար չունեն մարմնի մասով արտահայտված համարժեք, այն թարգմանում են սաժենով (*сажень, сажень*), բուլղարերենում՝ նաև հունանիշով՝ *разтег*:

Գործք, 27:28: Եւ ընկեցեալ զգունդսն՝ գտին *գիրկու* քսան, եւ սակաւ ինչ դարեալ՝ դարձեալ ընկեցին եւ գտին *գիրկու* հինգետասան:

И, вымерив глубину, нашли двадцать *сажен*; потом на небольшом расстоянии, вымерив опять, нашли пятнадцать *сажен*.

И, като измериха дълбочината, намериха двайсет *разтега*; отидоха малко по-нататък, измериха пак и намериха петнайсет *разтега*.

Գիրկը հայերենում ստացել է նաև «*գրկի/գոգի/ճոցի մեջ տեղավորվելու չափ*» իմաստ: Այս իմաստի համար կան մարմնի մասերին առնչվող հարաբերական համարժեքներ՝ ռուսերենում *охапка* (հիմքում *хапать*՝ ձեռք(եր)ով վերցնել, բռնելն է), *пазуха*, բուլղարերենում՝ *наръч* (հիմքում *ръка* (ձեռք) բառն է), *пазва*.

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
գիրկ/գրկաչափ	охапка, пазуха	наръч, пазва

*մի գիրկ ծաղիկ/խոտ/փայտ* - *охапка цветов/травы/дров* - *наръч цветя/дърва/слама*:

**Ձեռքը** ևս չափման միավոր է հայերենում և բուլղարերենում, սակայն տարբեր է դրա կապակցելիությունը (կապակցվում են տարբեր բառերի հետ).

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
ձեռք	-	ръка

*Մի ձեռք* (մի քանի իր, որոնք միասին մի ամբողջություն են կազմում) - *մի ձեռք սպիտակեղեն, մի ձեռք շոր, մի ձեռք անկողին*,

*Ръка*- (իսկց.) որևէ բան մշակելու, հավաքելու առանձին փուլը՝ *трета ръка малина*:

Կան չափման միավորներ, որոնք չունեն մարմնի մասով արտահայտված համարժեք մյուս լեզուներում:

Այդպիսի չափման միավոր է հայերենում **շալակը**՝ 1. թիկունքը ուսերից մինչև մեջքը, 2. բեռի այն քանակը, որ կարելի է մեջքին կրել:

(...) *մի շալակ* լիքն յուր սրտի ուզած *մրգեղեն* մեջքը կապած (...) թռչկոտելով տուն դառնում (Պերճ Պռոշյան); (...) նա *մի շալակ ցախ* կամ հսկա կոճղ անտառից բերելով, նետել էր կրակի մեջ (Խաչիկ Դաշտենց); Գնացի ձորիցը *մի շալակ թթան տերև* բերի (Հովհ. Թումանյան):

Ռուսերենում և բուլղարերենում չկա այս միավորին բացարձակ համարժեք. այն կարող է թարգմանվել նկարագրական եղանակով կամ հարաբերական համարժեքներով՝ *մի կապ, մի խուրձ* ևն.

*Մի շալակ ցախ/փայտ* - *вязанка/связка дров- сноп дърва за огрев*:

<sup>28</sup> Տե՛ս Մտ. Ագոնց, Հասարակախօսութիւն աշխարհագրութեան, 1817, Վենետիկ, էջ 17: (<https://rb.gy/bqwbhv>):

Հետաքրքիր օրինակ կա Համո Սահյանի պոեզիայում.

Ի՞նչ եմ բերել սարից .../Մի ծոց տաք-տաք երազ/Եվ մի շալակ երկինք...

Թարգմանիչը «ծոցի» համար ընտրել է համարժեք «пазуха», իսկ «մի շալակ երկինքը» թարգմանել է նկարագրական եղանակով՝ «ուտերիս մի ամբողջ երկինք է».

*Что я принес с гор?/ Полную пазуху теплых снов/ И па плечах целое небо...*

(թարգմ.՝ Մ. Դուդին)

Հայերենն ունի նաև «փոքր» չափման միավոր, որ բացարձակ համարժեք չունի մյուս 2 լեզվում: Հետևյալ դարձվածքները կարող են թարգմանվել միայն հարաբերական համարժեքներով կամ նկարագրական եղանակով.

*Կես փոքր* կամ կեսփոքր (չկշտացած, կիսակուշտ) – ռուս. *в проголодь*, բուլղ. *полугладен*,

*մի փոքր հաց*(մի փոքրի մեջ տեղավորվելու չափ (ուտելիքի մասին)) - մի թեթև կշտանալու չափ,

*մի փոքր հացի համար* (նվազագույն վարձատրության դիմաց (սվրբ. հեգն., հանդիմանական) - ռուս. *за кусок хлеба, за здорово живешь, за тарелку супа*, բուլղ. *за парче хляб, за къс хляб (работя)* նև:

Այս դարձվածքի հետ է անմիջապես կապված *հացափոքրի/հացփոքրի բանվոր* արտահայտությունը (հեգն., ծաղր.), որ նշանակում է «մի փոքր հացի համար սև աշխատանք կատարող»:

Փորը հայերենում ունի նաև «արգանդ» իմաստ, որից ունենք *«այսքան փոքր դատարկել»* (=այսքան երեխա ունենալ) դարձվածք:

Հայերենում և բուլղարերենում մարմնի մասով արտահայտված համարժեք չունեն հետևյալ միավորները (թեև կարող են թարգմանվել տառադարձման միջոցով, նկարագրական եղանակով կամ հարաբերական համարժեքներով).

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
- (հեգն., կտկ.՝ <i>յուրաքանչյուրից, յուրաքանչյուր մարդուց</i> - (գոհ., արհ., <i>յուրաքանչյուրից, յուրաքանչյուր մարդուց</i> )	<b>с носа</b> (нос-քիթ)  <b>с рыла</b> (рыло - քրոշ <i>կենդանիների քթի վերին հատվածը, 2. փիւբ., գոհ. ռեխ, մոռլթ</i> )	-
վերշոկ (տառադարձված հանդիպում է հիմնականում թարգմանական գրականության մեջ)	<b>вершок</b> (≈4,4-4,5 մմ) (սկզբնապես նշանակել է ցուցամատի առաջին ֆալանգի չափ) <sup>29</sup>	-

<sup>29</sup> Sէ՛ u вершок / Этимологический онлайн-словарь Фасмера М., ЛГОН.

Նշենք, որ թեև հայերենում առանձին բառ չունենք, սակայն ունենք ոչ վերբալ միջոցով *вершок*-ի չափն արտահայտելու ձև. ցուցամատի ծայրը շարժույթով ցույց ենք տալիս և ասում՝ ա՛յ այսքան: Ի դեպ, նույն կերպ շարժույթով ենք ցույց տալիս նաև չափման այլ միջոցներ՝ *մինչև այստեղ* (և ձեռքով ցույց ենք տալիս կոկորդը, գլխից վերև), *ա՛յ այսքան* (և ձեռքով ցույց ենք տալիս եղունգը, մատի 1 կամ 2 ֆալանգը):

Այսպիսով, ինչպես տեսնում ենք բերված օրինակներից, մարմնի մասերին առնչվող չափման միավորների մեծ մասն ունի նույն բառով համարժեք քննության առարկա լեզուներում: Այդ չափման միավորները հիմնականում ընդհանուր են գրեթե բոլոր հին քաղաքակրթությունների համար: Կան նաև չափման միավորներ, որոնք չունեն մարմնի մասով արտահայտված համարժեք մյուս լեզվում/լեզուներում, կամ նույն չափման միավորը արտահայտված է այլ մարմնի մասով: Սակայն նույնիսկ համարժեքի առկայության պարագայում կարող են թարգմանության ժամանակ խնդիրներ ծագել, հատկապես երբ այդ չափման միավորները կիրառվում են կայուն բառակապակցություններում, դարձվածքներում, կամ ժամանակի ընթացքում դրանք ձեռք են բերել նոր իմաստ:

**АРЕВИК КАМАЛЯН – *Единицы измерения, связанные с частями тела в армянском, русском и болгарском языках.*** – В древних цивилизациях основой для единиц измерения служили прежде всего части человеческого тела. Многовековые торгово-экономические, культурные и политические контакты разных стран и народов способствовали также заимствованиям, поэтому неудивительно, что одни и те же единицы измерения существуют в разных языках. Некоторые из этих единиц сегодня вышли из употребления (например, армянский «լսւնգուն» или русский «локоть»), но большая часть продолжает использоваться в разговорной речи, повседневной жизни, встречается в устойчивых словосочетаниях и идиомах. В статье впервые подвергнуты сравнительному анализу единицы измерения, связанные с частями тела, в армянском, русском и болгарском языках. Цель работы – выявить как общие черты, так и различия трех языков. Эти различия иногда становятся проблемой при переводе с одного языка на другой, особенно когда та или иная единица измерения встречается в идиомах.

**Ключевые слова:** народная метрология, единицы измерения, части тела, фут, щепотка, пядь, перевод соматических фразеологизмов

**AREVIK KAMALYAN – *Body-Based Units of Measure in Armenian, Russian and Bulgarian Languages.*** – In ancient civilizations, the basis for units of measurement was primarily human body parts. Centuries of trade, economic, cultural and political contacts of different countries have also contributed to borrowing, so it is not surprising that the same units of measurement exist in different languages. Some of these units have fallen out of use today (e.g. Armenian "լսւնգուն" or Russian "локоть"), but most of them continue to be used in colloquial speech, everyday life, and are found in set phrases and idioms.

In the article the units of measurement related to body parts in Armenian, Russian and Bulgarian languages are subjected to comparative analysis for the first time. The main purpose of the paper is to identify both common features and differences of the three languages. These differences sometimes become a problem when translating from one language to another, especially when a particular unit of measurement occurs in idioms.

**Key words:** ethno-metrology, units of measurement, body-based units of measure, foot, pinch, span, translation of somatic idioms and phrases